‘ԽԵԼԱՑԻ ԵՎ ՀՈԳԱՏԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ՇԱՏ ’. ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵԴԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

27.10.2014 12:03



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը ստացել է շնորհակալական դիմում Նավասարդ Ալավերդյանի ծնող Սեդա Դանիելյանից: Նա մասնավորապես գրում է. ‘Թիվ 49102014 քրեական գործով իմ որդու՝ Նավասարդ Ալավերդյանի պաշտպանությունը իրականացնելու առումով, առնչվել եմ ձեր պալատի անդամ փաստաբան հանրային պաշտպան Անուշ Հայկազի Մխիթարյանի հետ (արտոնագիր 282):
Նշեմ որ ս.թ հունվարի 31-ից Անուշ Մխիթարյանը նշանակվել է, որպես հանրային պաշտպան և շուրջ 9 ամիս իրականացրել իմ որդու իրավունքների պաշտպանությունը նախաքննության ընթացքում: Նրա կողմից բազմիցս բողոքարկվել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դատարանի որոշումները և համառ ու տքնաջան աշխատանքի շնորհիվ հասել դրական արդյունքի (որդուս մեկ միլիոն դրամ գրավի դիմաց ազատ արձակել): Այն, որ այսօր իմ միակ որդին գտնվում է իմ կողքին և ազատության մեջ դա մեր պաշտպան Անուշ Մխիթարյանի խելացի բանիմաց ու նվիրված աշխատանքի շնորհիվ է: Ես շատ շնորհակալ եմ ձեր պալատին, որ նման խելացի ու հոգատար փաստաբան ունեք, որոնք ջանք չեն խնայում զօր ու գիշեր մտավոր ծանր աշխատանքով վերադարձնում են որդեկորույս մորը իր միակ զավակին, որը սխալմամբ վատ ճանապարհով է գնացել: Անուշ Մխիթարյանի նման խելացի և հոգատար փաստաբանների կարիք մեր երկիրը շատ ունի’:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })